

2399

1915 № 708

5101

Մկրտիչ Սիմոնեան Բաղդասարեանց

Института
Востоковедения
Академии Наук
СССР

ՅՈՅՋԵ ԵԿԵՂԵՑԻ
ՈՒ
ԲԵԽԵՐ ԱՇՈՒՆԸ



Թ. 1. Ժ. 1. Բ. 0

Յաղարան «ԷՊՈԽԱ» Մուղեյսի փող., № 8.
1914

01 JAN 2009
EIOS SO 95

19 NOV 2011

ՄԱՅ
4012

Համ
6121


Մկրտիչ Սիմոնեան Բաղդասարեանց

891.99

Բ-24

Института
Востоковедения
Академии Наук
СССР

ՅՈՅՃԵ ԵԿԵՂԵՑԻՆ
ՈՒ
ԲԵԽԷՐ ԱՇՈՒՂԸ



Թ. Ի Ժ Լ Ի Ա

Տպարան «ՀՊՕԽԱ» Մուղէյսկի փող., № 8,
1914

28.02.2013

23700

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ.

Ապրելով հայրենիքից հեռու օտար աշխարհում, բայց նրա կենսատու օդով մնւած, նրա կարկաչիւն աղբիւրների ջրերը խմած, ես, որքան էլ հեռու, սակայն մանկական ու պատեհական քաղցր յիշողութիւններով կապւած եմ քեզ հետ, իմ քաղցր հայրենիք:

Մեծ ուսում չունեմ ես և ոչ էլ տաղանդաւոր գրիչ, որ աւելի ազգու կերպով կարողանամ քո գովքն անհետ քո կեանքում եղած պատկերները տալ, կամ թէ չէ քո հասարական կեանքում ապրող մի բուռն ժողովուրդի գրամաները նկարագրեմ, սակայն մի բանում ես խորապէս համոզւած եմ, որ հայրենիքից հեռու մեր պանդուխտ երիտասարդները եթէ նիւթապէս չեն օգնում իրանց հայրենիքի հազարաւոր ցաւերին, գոնէ քարոյապէս նրանք պարզաւոր են նպաստել նրա յառաջադիմութեան գործին: Ես այսպէս եմ հասկանում և դրա համար էլ տալիս եմ իմ յիշողութիւններիս երկրորդ պրակը հայրենիքիս ընթերցող գասին, որ նա աւելի զարգանայ ու յառաջադիմի: Թող ով աւելի է սիրում իր հայրենիքը աւելի մեծ գործերով երևան գայ, իսկ մենք կմնանք այս շրջանակում և կաշխատենք ապագայում, էլ աւելի լրիւ գործեր տալ:

Մ. Ա. Բ.



ՑՈՅԺԵ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ԲԵԽԵՐ ԱՇՈՒՂՀ

I

Պարսկաստանի ղարադաղ գաւառի նորաշէն
գիւղի արեելեան կողմում, չորս վերստ հեռա-
ւորութեան վրայ գտնուում է մի պատմական
յայտնի և այդ շրջանում բոլորին ծանօթ մի
ուխտաւեղ, որին անուանում են՝ ցոյժէ եկե-
ղեցիք:

Այդ եկեղեցին չորս կողմից շրջապատւած է բարձր ծառերով և կարկաչահոս ու պաղ աղբեկներով։ Եկեղեցին գտնւում է մի աննման ու հրաշալի ձորում, որի նմանը չկայ այդ ամբողջ գաւառում։ Եկեղեցու, առաջին 1904 թ. կառուցւած է երկյարկանի մի շինութիւն եկտր ուխտաւորների համար, որը կառուցւել է շրջակայ գիւղացիների—Ռուսաստանի զանազան քաղաքներում հանդանակած գումարներով։ Պէտք է ասենք, որ այդ շէնքը իր կառուցւածքի գեղեցկութեամբ, շնորհիւ—հմուտ և փորձառու վարպետի ժրաշնան ջանքերի՝ թողնում է շատ հաճելի տպաւորութիւն։ Վանքի խորանի արևելեան պատում կայ մի փոքրիկ պադանան մոտ

վառելու համար, իսկ սեղանի տակին մի յըդկացած մարմառէ քար, որի վրան մակագրւած է՝ «Այս է Դամբարանը Սուրբ Գէւորգայ» ի թիւն Ռ. Ճ. որ է 1100:

Դարադաղ գաւառը ունի քսան և ութ գիւղ որոնք բաժանւած են հինգ շրջանների - Տզմար, Հասանով, Մէշափարայ, Մնջվան և Քէյվան: Այդ գիւղերի հասարակութիւնները, որպէս պատենական սովորութիւն, ամենայն տարի Զատկական սուրբ թաթախումից վեց օր անց, ամեն մի տուն, ամեն մի մարդ իր ուխտած մատաղացուն վերցնելով, յիշեալ եկեղեցին ուխտ են գնում:

Իսկապէս հրաշալի պատկեր: Գարնան գեղածիծաղ արեգակի հեղ ճառագայթները տարածւած այդ անմահական երկրի չորս կողմը, ընութիւն է մտցնում թէ ծերի թէ երիտասարդի մէջ և ամեն մէկը աշխաղում է, որքան կարելի է, շուտ հասնի այդ պատմական սրբավայրը և իր սրտի գաղտնիքը մըմնջայ նրան: Ժողովուրդի մի ստար մասը երկիւղ կըելով, որ հնարաւորութիւն չի ունենալ միւս օրը եկեղեցու բակում շինած բնակարանում տեղ ըրոնել, մի օր առաջ է շտապում գնալ: Դուք պէտք է տեսնէք թէ ինչպէս այդ 28 գիւղի ժողովուրդը, ուրախ-զուարդ վազում են այն քարքարոտ, ծուռ ու մուռ ծառօտ սարերով, ուղիներով, կարծես նրանց համար ոչ թէ դա մի դրժ-

շարանց վերիլը լինի, այլ մի տափարակ դաշտ՝ ճանապարհը ուղիղ ու լայնարձակ:

Ահա գալիս է մեծ պասը. գիւղացիները բաժան-բաժան ազգականներով և բարեկամներով հաւաքւում են իրենց մեծ նանի կամ ծերունի պապերի տները—պաս բոնելու, իրենց մաքուր և անկեղծ սրտերով և այդ պասի ամբողջ երկար ու ձիգ շտրաթները, նրանք ամենայն օր պէտք է գնան գիւղական եկեղեցին և շրջակայ մօտիկ սրբերը աղօթքներ մըմնջալու, որպէս զի նրանք այդ սրբերը ամեն մէկի սրտի խորհուրդը կադարեն, նրա նեղ օրին օգնութեան համանեն:

Մեծ պասի սկզբին, տեղական հնուց սովորութեան համաձայն, այդ գիշերը գիւղի երեխաները բաժանւած գանաղան խմբերի, վերցնում են գուլբայի մի հատ և շրջելով ամբողջ գիւղը տների երթիկներից ցած են թողնում, որպէս զի գիւղացիք ի նշան մեծ պասի մի-մի բան ձգեն գուլբայի մէջ:

Ցիշում եմ ես և իմ մանկական բաղցը և երջանիկ օրերը, յիշում եմ նա և այն, որ ես էլ մէկն էի նրանցից, այն շարաճճի ու անհամբեր մանուկներից, որ ուրախութեամբ շրջում էինք գիւղում և այդ մեզ անչափ մեծ բաւականութիւն էր պատճառում, չնայելով, որ այդ հաւաքումներից յետոյ, բաժանելու ժամանակ մենք

միշտ կոխւ և աղմուկ էլինք ունենում միմեանց յետ:

Այս, շատ լաւ եմ յիշում ես. առաջին անդամ, երբ բարձրացրինք գուլբայի հատը, նրա մէջ գտանք միայն մի ընկոյզ, երկրորդ տնից՝ միայն մի ծու. և այդպէս նուռ, չամիչ. և այլն, որ մի մեծ տոպրակ լիբը իս ինկեր Խօսրովի հետ շալակած եկեղեցու գուռը վաղեցինք բաժանելու, և... բաժանեցինք:

Դրանից յետոյ մեզ համար սկսեց մի նոր կեանք: Այժմ արդէն օրերը համարելով սպասում ենք պասի վերջանալուն: Բայց սադանան տանի այդ պասը էլ վերջ չունէր. օրերը համարում էինք հա համարում, բայց չէր վերջանում: Երբեմն ճարներս կտրած մօտենում էինք գիւղական քահանային և նրանցից հարցնում: Սակայն նա մեզ պադասխանում էր, որ գեռ շատ օրեր կայ, և հարկաւոր է համբերել, որ «համբերութիւնը կեանք է», աւելացնում էր նա ամեն ժամանակ, մինչդեռ մենք գիշերները նոյն իսկ քուն չունէինք: Ի վերջոյ այդ օրուան էլ արժանացանք, բայց դեռ կրկին մի շաբաթ էլ հարկաւոր էր մեզ գուքելու, զարդարելու, որպէսզի «Յոյժէ» եկեղեցում ուխտաւորների առաջ ամօթով չմանք:

— Ահա և վերջին օրը: Գիւղացիները շարան-շարան դուրս եկան գիւղից, ամեն մէկը իր

ճաշակի և կարողութեան նոր զգեստներով, ումանք ձիով, ոմանք ոտքով շտապում են, որովհետև եկեղեցին հեռու է գիւղից 15 վերստով:

Այս, այժմ մենք ամեն ինչ կադարած ուրախ սրտով հեռացանք գիւղից: Գիւղում միայն հովիւն էր մնացել, որը առաւօտեան ծէգին հետ իր խաշներն առաջն արած խաղեր ու տաղեր ասելով բարձրացել էր գիւղի մօտակայ բլրակը սրինգը ձեռին նւագելով և արածացնում էր իր սիրած խաշները և մի աչքով էլ դատարկւած գիւղին հսկում, որ նրան մի վտանգ պաղահած դէպքում օգնութեան համնէր և կամ ուխտորներին իմաց տար:

Ես ճանապարհին մի փոքր յետ մնացի ուխտորներից, սակայն մի փոքր աւելի ոյժ տալով ուղերիս, հասայ այդ բազմութեանը «Դիճար» կոչւած ծուռ ու մուռ լանջին մօտ, որ մեզ տանում էր ուղիղ դէպի «Յոյժէ» եկեղեցին: Մի կէս ժամ էլ շարունակելուց յետոյ յանկարծ լսեցինք հրացանների ձայն: Մերոնք անմիջապէս կանանց ու երեխաններին առանձնացնելով յանձնեցին լաւ զինւած երիտասարդների մի խմբի և իրենք ամի ջապէս դիրք բռնեցին: Սակայն բարեբախտաբար պարզեց, որ այդ կրակողներն էլ ուխտորներ էին, որոնք օրուայ տօնի հանդիսաւորութեան տպաւորութեան տակ էին հրացաններ աղջակուժ: Մենք նկատելով դրանց և

մօտենալով միասին խեղջ ձիաների հոգին հանելով և ջերիդ խաղալով մի ժամ է շուտ տեղ հասանք:

Եկեղեցու բակից երբ ես նայեցի չորս կողմու տեսայ, որ այդ ձորի բոլոր կողմերից էլ ուխտորներ են գալիս և նրանց չեր խանգարում, ոչ ծառը, ոչ քարը և ոչ էլ այդ անմադրնչելի սարալանջը: Այդ ժողովուրդի բազմութիւնը այնքան մեծ էր, որ շատ անգամ մայրը սրգուն էր կորցնում, ըոյը եղբօրը, կինը ամուսնուն, ընկերը ընկերօջը: Ես էլ իմ ընկեր թովմասին էի կորցրել և նրան էի փնտում, սակայն չէինք կարողանում գտնել միմիանց: Ես երկար որոնելուց յետոյ զայրացած ու յօպնած դիմեցի դեպի եկեղեցու դուռը, ուր հաւաքւած էին ծերունիները և իրանց սովորական զրոյներն էին սկսել:

Ես հետաքրքրւելով 80—90-ամեայ ծերունիների զրոյցով, երկար ականջ դրի նրանց: Նրանց խօսակցութիւնը հին էր շատ հին. Նրանցից իւրաքանչիւրը ոգեսրւած իր նիւթով կարծես չէր ուզում հերթը մի ուրիշին զիշել. Նրանք պատմում էին թէ իրանց գլխով անցածը, և թէ իրենց պապերի ասածները Ղարաբաղի մելիքների-պարսիկների հետ ունեցած կոիւների մասին, որի ժամանակ պարսից կառաւարութիւնը ոյժով տիրել էր Ղարաբաղին ու հայերին քշել իրանի

զանագան անկիւները, որպէսզի նրանք համախմբւած վտանգաւոր ոյժ չըներկայացնեն իր կառաւարութեան համար:

— Է՞ս ի՞նչ ես ասում. ինչ Մելիք ջան-շարունակեց մի ուրիշը. ես էլ եմ լսել: Այդ ժամանակներում իմ պապն էլ մի անհաւատալի հանդիպում է ունեցել այստեղ, հենց այս բակում:

Ծերունիները ականջները սրեցին, նրանցից իւրաքանչիւրը հետաքրքրութեամբ լսում էր:

— Խնդ ըում ենք շարունակես—գոչեցին այս ու այն կողմից:

Ծերունին ոլորեց իր նոսր բեխերը, աչքերը երկիւղածութեամբ յառեց դիմացի եկեղեցուն, ձեռները բարձրացրեց փառք տւեց Ստեղծողին և ապա շարունակեց:— Փառք բեզ Աստուած, փառք, ինչեր ենք լսել ու տեսել այս զօրաւոր Սուրբի մասին, ի՞նչ հրաշքներ է կատարել սա, քանի-քանի գժերի խելքի է բերել ու բանի խելօքների խելքից հանել, որոնք սրա կամքով չեն գնացել, շեղւել են Աստծու արդար ճանապարհոց՝ գողութիւն, թալան ու աւազակութեամբ են զբաղւել: Սրա հրաշքների մէկը—մեռնեմ զօրութեանը, որ երեխայ ժամանակն եմ լսել. և որին իմ պապը ականատես է եղել մաքիցս երբէք չի անցնել:— Այդ օրը հիւանդ էի—ասում էր ինձ պապս, բայց դէ՞ս ի՞նչ արած միթէ հիւանդութիւնը կարող էր ինձ արգելել, որ ես եկեղեցի

չգնայի: Զանգի ձայնը, որ ես լսեցի մի վերստ
հեռաւորութեան վրայ էի, ոյժ տւեցի ուսքերիս
և հասայ այն ժամանակ, երբ ժամերգութիւնը
արդէն սկսւած էր: Ներս մտայ եկեղեցու զա-
ւիթը և ի՞նչ տեսայ. այն ամբոխը, որ հաւաքւել
էր այստեղ աղօթք անելու, իր սրտի գաղտնիքը
Սուրբի առաջ մըմնջալու, շշկւած իրանց կոր-
ցրած, արձանների պէս քարացած կանգնել էին
այստեղ և լուռ էին բոլորը, նրանցից ոչ մէկը
չէր համարձակում ընդհատել այդ խորհուրդա-
ւոր լուռթիւնը:

— Հա դու էտ ես պատմում, լսել եմ ճիշտ
է ի՞նչ որ ասում է—ընդհատեց Մելիքը և զլուխը
աջ ու ձախ տմբտմբացրեց:

— Տօ դէ ձէնդ կարի է—գոչեցին այս ու
այն կողմից հետաքրքրուղ ծերունիները:

— Է՛ յետոյ, ի՞նչ էր պատահել—վրայ բե-
րեց մի ուրիշ՝

— Աստուած ոչ զիդէ հարցնողի զլուխը,
հմի ամենքտ էլ խօսեցէր ու միք թողնիլ, որ էս
մարդը պատմութիւնը շարունակի—ասաց մի
աւելի երիտասարդ զիւղացի, որ ինձ նման
ականջները սրած, անհամբերութեամբ լսում
էր նրան:

— Հա էն էի ասում, ես առաջ անցայ, մօ-
տեցայ այդ քարացած հասարակութեանը և ի՞նչ
եմ տեսնում. մի թուրք շալակած մի ահապին

դուռ չոք է չոք, արցունք թափելով դէպի եկե-
ղեցին է գնում: «Հեռու—այստեղից էյ, գու-
անորէն, ուր ես գնում—գուաց մի հայ պատա-
նի և մի ակնթարթում նրա թուրը շոքշողաց
թուրքի գլխին:

— Լսիր բարեկամ ի՞նչ կայ, անմիջապէս
այստեղից հեռացիր, ապա թէ ոչ նա զիժ է,
տեղն ու տեղը կսպանի բեզ, հասկանո՞ւմ ես
անմիջապէս հեռացիր այստեղից:

— Գուրբան օիմ սանայ աշնայ (մատաղ
լինեմ բեզ բարեկամ)՝պաղատում էր անձար ու
մենակ մնացած թուրքը.—դու որ այդքան մե-
ծահոգի ու բարի գտնւեցիր խնդրում եմ օգնիք
և այս բանում, որի հանցանքի համար, ահա մա-
տաղ ենք բերում ձեր այս սուրբի և զօրաւոր
եկեղեցու համար մի զոյգ եզներ:

— Մենք քար էինք կարել—ասում էր պապս
—չէին իմանում ինչով բացադրել և ամեն կող-
մից լինդրեցինք տղերանցը, որ հանգիստանան:

Նրանք բոլորը հանգիստացան: Այն ժամա-
նակ թուրքը մի փոքր շունչ քաշելուց յետոյնո-
րից շարունակեց:

— Մենք ձեր խառնւած ժամանակ, ուզե-
ցինք մլասել ձեզ, ու ձեր վրայ ծիծաղել. և,
հանելով եկեղեցու դուռը, շալակեցի ու տուն
տարայ: Բայց երբ ուզեցի ցած զնել նա այլ ևս
պոկ չեկաւ մէջքից: Այդ ժականակ օգնութեան

եկան ինձ այլ մարդիկ, բայց չեղաւ ու չեղաւ.
մերոնք բոլորը բարացել էին. ամբողջ զիւղը
հաւաքւեց. ոմանք գոռում էին թէ պէտք է կոտ-
քել, ոմանք թէ՝ պէտք է ջարդել։ Այդ ժամա-
նակ մեր իմաստուն մօլլան—գուրբան ունըն
ջաղինայ (մեռնեմ նրա կոչումին)՝ թոյլ չտւեց
ոչ ոքի, որ մօտենան և պատմեց մեզ դրա նշա-
նակութիւնը, բացադրեց մեզ, որ դա մեր գոր-
ծած յանցանքի պատիմն է և նա խորհուրդ
տուեց մեզ. նորից բերել գողացածը սրբին պահ
տալ և ազարւել պատժից։ Իսկ այժմ խնդրում
եմ թոյլ տաք դուռը կրկին իր տեղը դնել։

— Թուրքը առաջ անցաւ, իսկ այդ ժամա-
նակ եկեղեցու չորս բոլորքը շրջապատած ամ-
բուխը, ծունկ դրած աղօթում էր երկար ձեռ-
ները երկինք բարձրացրած։

Այդ ժամանակ թուրքը կամաց-կամաց մօ-
տեցաւ եկեղեցու դռանը և հենց որ հասաւ դը-
ռան մօտ, դուռը պոկւեց նրա մէջըից ու վայր
ընկաւ. այդ հրաշքը բոլորը տեսան։

— Փառք քեզ Աստուած, փառք քեզ, — ա-
սում էր ծերունին ամէն մի նախադասութեան
վեռջը։

Իսկ եկեղեցու քահանան, որ նոր էր աւար-
դել ժամերգութիւնը և դուրս եկել եկեղեցուց
մացել էր ապշած կանգնած։ — Այդ ժամանակ
լուեց զանգերի ինքնաբերաբար դողանջը, որը

երբեմն մեղմ, երբեմն շատ ուժեղ կերպով հա-
ւատացեալներին եկեղեցի էր հրաւիրում աղօ-
թելու և տիրօջը փառք տալու։ Մենք մտանք
եկեղեցի և աղօթեցինք, երկար շատ երկար աղօ-
թեցինք։ — Ես բարացել էի, մացել անշարժու-
թեան մէջ այդ պատմութիւնը լսելիս, իսկ իմ
կողքին կանգնած զիւղացին շարունակ ծիծա-
ղում էր։

— Ինչու համար ես ծիծաղում, կարծում
ես թէ սուտ եմ ասում ինչ է, իմ պատմութիւնը
զուտ ճշմարտութիւն է և պապս ականատես է
եղել՝ այս իրողութեանը-ասաց Վանին ու յօն-
քերը խօժուեց։ — Զէ Վանի խնամի չէ, ես բո
պատմութեան վրա չեմ ծիծաղում, ես ինչ իրա-
ւունք ունեմ քո պատմութեան վրայ ծիծաղելու,
ես միայն ծիծաղում եմ թէ ինչ նեղ զրութեան
մէջ կլինէր ընկած թուրքը։ Երբ եկեղեցու ա-
հագին դուռը նրա մէջըին էրկպել ու պոկ չէր
գալիս։

— Ուրեմն թող լաւ հասկանան մեր սուրբ
Գէւորգի շնորհքը և նրա հետ կատակներ չանեն
— վրայ բերեց Հաթօ ծերունին։

— Տօ դու էլ ինչ ես յիմար-յիմար խօսում
սուրբ Գէւորգի հրաշքները նրանք նոր չեն իմա-
նում, նրանք այդ շատ վաղուց են իմանում և
դրա համար էլ ամենայն տարի ոչ միայն մենք
թուրքերն էլ են խմբերով նրան ուխտ գալիս։

Կէս օրն անցել էր, ուխտորները սկսել էին իրանց մորթը՝ մէկը մորթում, միւսը՝ մաշկում, միւսը՝ սպառեցնում զրբեցու չորս կողմն էր պատեցնում գառը կրկին մորթելու համար: Պառաւ կանայք զազանները ջրով լցրած զրել էին կրակին ու սպառում էին մատաղի եփելուն: Հարս ու աղջիկ, կին ու երեխայ թափւել էին անտառներն ու ձորերը պաղ ջրերում լւացւելու, ծաղիկ ու ծնձաղիկ քաղելու: Երիտասարդ տղերը հեռու սարի գագաթին սովորական ազդակով նշան են խփում իրար գովելով: Մի քիչ հեռու ջահիների մի այլ խումբ սրին գները ձեռներին պառկել էին կանաչ խուսերի և ծաղիկների վրայ, ու ծլվացնում են գարնան խօսնակ թոշինների նման: Մի ուրիշ տեղ ջահել հարսների մի խումբ մի~մի կլոր քար վերցրած եկեղեցու պատին են կպցնում նրանց հետև իրանց սրտի խորհուրդը մրժնջում: Թէ ում քարը երեք անգամ կպաւ, նրա խորհուրդը կկադարւի և շատերն էլ կադարած տեսնելով յետ են գնում ուրախ սրտով, ժամանակ երեսներին: Մի ուրիշ տեղ էլ աշուղներն են սկսել իրանց սաղ ու դափով նուագել ու երգել և զանազան հին ու նոր հեքեաթներ պատմել:

— Տխուր էր սիայն մէկը ոչինչ չէր խօսում, չէր երգում և իր մտքերի մէջ ընկղմւած իր սկ օրն էր ողբում: Դա կոյր աշուղներից մէկն էր, որին մարդիկ, նայել անգամ չէին ուղում: Նրա երգը՝ բանի նման չէ—ասում էին շատերը երեսները դարձնելով նրանից, սակայն նա երգում էր. կլսեն թէ չէն լսի պէտք է երգել, երեխ այդպէս էր մտածում նա, ու կրկին խփեց նա իր «սաղի» ողբածայն լարերին ու կրկին երգեց նոյն, բայց ազգեցիկ երգը:

Մեր Հայրենիք թշւառ անտէր

Մեր թշնամուց ստնակոխ

Իւր որդիքը արդ կանչում են

Հանել վրէժ քէն ու ոխ...

Հերիք էյ, դու կոյր՝ ինչու ես խանգարում մեր ուրախութիւնը, թող որ լսենք աշուղների պատմութիւնը, գոռաց յանկարծ մէկը:

Կոյրը երկիւղածութեամբ վայր դրեց «սաղը» և լոեց:

Պատմաբան աշուղները սկսեցին իրանց հեքեաթները, ու ծերունիները ականջները սրած լսում էին նրանց: Բայց մի բան ինձ համար գաղտնիք էր և իմ մտքերը հանգիստ չէին թողնում ինձ: Պէտք էր իմանալ, պէտք էր իմանալ թէ ինչու դուր չեկաւ այդ ամբոխին աշուղի երգը և թէ ինչու նա այդպէս կոյր է ու երեսը կնճոռած:

— Բեխէր է ասում էին շատերը, բայց թէ ինչու, ոչ ոք ոչինչ չէր ասում, բայց պէտք էր իմանալ:

— Ինչու պապիկ, այս աշուղը այսպէս կոյր է—հարցրի ես իմ կողքին նոտած ալեւոր ծերունուն և թէ ինչու նրա երգը դուք չէ գալիս ամբոխին:

— Նրա համար որ բեխէր է:

— Ինչու է բեխէր պապի:

— Հենց այնպէս բեխէր է:

— Լաւ, բայց ինչու է և կոյր:

— Բեխէր է եղբայր, բեխէր, հենց դրա համար էլ աչքերը հանել են:

— Ով հանեց պապի:

— Երկրի տէր-փաղիշահը:

— Տէր Աստած ինչ անգթութիւն. բայց ինչով իմանալ այդ պապի:

— Այդ աշուղը եղբայր երկար շատ երկար պատմութիւն ունի սակայն ես քեզ կարճը պէտք է ասեմ:

— Այդ մարդը 10—15 տարի է ինչ կոյր է. այդպէս շարունակեց նաև և քանի տարի է ինչ մեր երկրում է ապրում:

Դա փախստական է, և երբ առաջին անգամ ոտք դրեց մեր գիւղը հազիւ թէ 21—22 տարեկան լինէր, մի բարձր յաղթանդամ և միենոյն ժամանակ զեղեցիկ տղայ էր, դա թափառեց

մինչև հինգ տարի անգործ մեր գիւղերում որա ու նրա հայն ուտելով. յանկարծ մէկ օր լուս ենք թէ նրան ձերբակալեցին շահի մարդիկը, թէ ինչու չիմացանք, և մինչ այդ օրն էլ չգիտէինք նրա ով լինելը. մէկ օր էլ ահա լուսմ ենք թէ փաղիշահը հանել տուեց նրա ջուխտ աչքերը որից յետոյ պարզեց այդ մարդու ով լինելը:

— Բայց որտեղացի է նա պապի: կամ թէ ինչից նա դրթւած փախուստի է դիմել: Ծերունին աչքերը պատեցնելով այս ու այն կողմ երկիւղածութեամբ ընկաւ ականջիս ու ասաց:

— Սուլթանի երկրից է, ասում են ազգամէր—յեղափոխական է:

— Լաւ, բայց ինչին վարագրել նրա բեխէրութիւնը:

— Հա, Էն էի ասում, չարը մօռանայ. Երբ էտ անիծւածը ոտք դրեց մեր գիւղը թէ չէ, նրա հետ եկաւ և բոլոր տարափոխիկ հիւանդութիւնները՝ ծաղիկը, կարմրուկը, և խսպառ ճնջեց մեր գիւղի մատաղ երեխաներին, իսկ նրան ձերբակալելու ժամանակ էլ, զոհ գնացին մերոնցից աւելի քան տաս տղամարդ մի խօսքով բարձր եղբայր, ինչ ես ուզում բեխէր...

III.

Մութ ու խորհուրդաւոր գիշեր էր. «մատը

Институт
ВОСТОЧНОГО СЕВЕРА
Академии Наук
СССР

որ տայիր աչք կհանէր». սև ու մռայլ գիշեր.
Երկիւղի ու զարգանդի գիշեր, այդպիսի մի օրես
իմ կեանքիս մէջ երբէք չէի հանդիպել: Ամպերը
որոտում էին ու զարհուրելի օձածե փայլատա-
կումներ արձակում, քամին մռնչում էր և իր
անդադար սուլոցով աւելի ևս խորհուրդաւոր
դարձնում ու երկիւղի սարսափ տարածում բո-
լորի վրայ: Անմենքը լուս էին և կարծես մի ինչ
որ անակնկալի էին սպասում: Երբեմն-երբեմն
այդ ահեղ լուսթեան մէջ լսում էր սարերի
գագաթներից սոված գայլերի ոռնոցը, իսկ եր-
բէմն էլ գիշերուայ բուի սրտածմիկ բուոցը:
Անազին բազմութիւնը, այդ խորհուրդաւոր գի-
շերը մտել էին իրանց տները դռները փակել,
ոմանք քնել, ընկել երազների աշխարհը, ոմանք
էլ երկիւղից ձայները կտրել՝ սպասողական դրու-
թեան մէջ ընկել: Յանկարծ գուռը ծեծեցին...
թըլիսկ... թըլիսկ... թըլիսկ...

— Ո՞վ կարող է լինել այս ահեղ գիշերին—
մտածեցի ես, և մի ակնթարթում հազար ու մի
խորհուրթաւոր մտքեր անցաւ զլխովս ու ես
փշաքաղեցի: Արդեօք գող, աւազակ է, թէ օտար
թշնամի...:

— Թըլիսկ... թըլիսկ... թըլիսկ... կըկին ծե-
ծեցին դուռը, բայց այս անդամ աւելի դայ-
րացած:

— Ո՞վ ես գու, սիրտ առած մօտեցայ

դռանը, և ինչ ես ուզում գիշերուայ այս պա-
հուն:

— Բաց, բաց—հազիւ լուսեց նրա ձայնը:

— Տէր-Աստուած, ով է այս մարդը, որ
ինձ հանգիստ չի աալիս և այսպէս խորհուրդա-
ւոր կերպով պահում էիր ով լինելը, մտածեցի
ես և կըկին մի սասուռ անցաւ մարմնովս—ով
ես գու, մարդ:

— Բաց, բաց դուռը և ես կասեմ թէ ով
եմ, այստեղից վախենում եմ յայտնել իմ ով
լինելս, սարերն ու քարերը ականջ են դնում
ինձ, նրանք ուզում են խօսք թոցնել իմ բեր-
նից... ոչ, ոչ չեմ յայտնիլ իմ ով լինելս, բաց,
թող գամ ներս և այդտեղ ասեմ թէ ով եմ ես և
ինչու եմ այս խորհուրդաւոր Մամին եկել քեզ մօտ:

Քանի գնում այնքան աւելանում էր վախս,
բայց հնար չկար, մի կողմից վախենում էի,
միւս կողմից հետաքըրըւում նրա ով լինելով և
այս ժամին գալու համար: Զերքս տարայ գր-
պանս, հանեցի բանալին և դողդողալով մօտեցայ
դռանը ու բաց արի, նայեցի, կըկին նայեցի,
գիշերուայ մթութեան մէջ ոչ ոք չեր երևում:
Այդ ժամին նորից փայլատակեց երկինքը և ես
տեսայ որ ոչ ոք չկայ. գուրսում գտնւող բոլոր
իրերը իր սովորական տեղն է: Մի փոքրիկ սառ-
սուռ անցաւ մարմնովս, ես հասկացայ որ երա-
զում եմ եղել, ամեն ինչ ուզեցի մօտանալ, վե-

բարկուս ծածկեցի ու ապենեակի մի անկիւնը
քաշւեցի նորից քնելու։ Շատ չէր անցել, որ նա
կրկին մօտեցաւ ինձ ու իր յուժկու ձայնով
կանչեց, — Ո՞ւր ես էյ բարեկամ. . . .

— Ո՞վ ես դու, մարդ, դէ հրեշ. և ի՞նչ ես
խանգարում իմ հանգիստը — նորից կրկնեցի ես։

— Այժմ ես ոչինչ չունեմ ասելու, ամեն
ի՞նչ իր ժամանակն ունի. այժմ ես պէտք է
ասեմ քեզ իմ ով լինելը։ Ես անմիջապէս ճա-
նաչեցի նրան,

— Այդ դժւ ես Ակի ապրօ, և ի՞նչ ես շի-
նում այստեղ, լեղիս պատուեց թամամ, հէր
օրնած դէ առաջուց ասէիր, որ իմանայի. Էլի.
կարծում էի թէ թուրք աւազակներից ես և մեղ
կողոպտելու մտքով ես եկել։ Ես քիչ առաջ էլ
երազում տեսայ, որ մեղ կողոպտել, տկլորացրել
ու մեր գիւղի ձորն են ածել։

— Երազ, այս ամեն ի՞նչ երազ է, որ կա-
զարւում է մեր իրականութեան մէջ և այդ
սխալ չէ։

— Դէհ ասայ տեսնենք ի՞նչ կայ էս կէս
գիշերին, որ շտապել ես։

— Էհ ի՞նչ ասեմ բարեկամ, Աստուած ին-
քը մեզ հայերիս ճակատին գրել է կարծես, միշտ
տանջւել այս անօրէնների ձեռքերում, էհ ի՞նչ
ասեմ, ախր ասած է հայ ես վայ ես» է։

— Դէհ ասա, լաւ հերիք է ի՞նչ փիլիսո-

փայական ոճով խօսես, ի՞նչ է եղել ի՞նչ կայ,
չլինի թէ ճանապարհին աւազակների ես հանդի-
պել։ Ասենք ջհանդամը թէ հանդիպել ես — ասա-
ցի և պարկեցի քնելու. բայց նա խօսում էր,
անդադար խօսում։

— Էհ, երանի չէր լինիլ, ևթէ մենակ ես
լինէի աւազակների հանդիպողը, ես լինէի և մի-
ակ զոհը, ահա երկրորդ օրն է այդ անօրէնները
թափւել են գիւղը էլ ի՞նչ թալան մարդասպա-
նութիւն, ամբողջ գիւղը աւերակ է գարձել,
քանդեցին եկեղեցին տարան սուրբ խաչն ու
աւետարանը։ Զուլում է զուլում, կադարեալ
զուլում։

Խեղճ ու կըակ Զաւաղին սպանեցին, Զհա-
նին, Բագալին, էլ որ մէկը ասեմ, որը թողնեմ
բոլորին էլ սրի քաշեցին, միակ ազադողները
մենք էինք թւով 40—50 հոգի, բոլորն էլ կին
ու երեխայ, նրանց թւումն էին միայն Ազարն-
ու Ակովը, որ մեզ Աստուած խնայեց։ Մենք
ձեր գիւղն էինք գալիս, բայց հակառակն եղաւ,
ու այդ սե ո մութ գիշերը առանց հասկանալու
ճանապարհներս շեղած յանկարծ թուրքի գիւղը
թափւեցինք։ Նկատելով մեր սխալը սկսեցինք
փախչել, բայց արդէն ուշ էր։ Նրանք կարծես
վաղուց մեզ լինէին սպասելիս, մեր հասնելը ու
նրանց շըջապատելը մէկ եղաւ ու խաշների պէս
մերոնց բոլորին գիւղի մէջ տարան, իսկ ես հա-

զիւհազ փորսող տալով կարողացայ քիչ հեռանալ գիւղից և վազելով ու շնչասպառ մի կերպ ահա այս մութ ժամին այստեղ հասայ:

— Ա՛թ նզովեալ երազ, աեսնեմ թէ չէ պէտք է կադարւի, ախ այս անիծեալ երազը ինչու տեսայ:

— Իսկ մենք երազ չենչ արդեօք:

— Ի՞նչ, երազ, խեղճ մարդ սարսափն այնքան է ազդել. որ դու քեզ երազի մէջ ես զգում, հա, հա, հա... երազ,

Ես Գէւոն եմ Գէւոն, Ակի ապրօ, Գէւոն, որին ճանաշում է ամբողջ աշխարհը, և ինքն Աստուծը արար աշխարհի:

Նա նայեց ապշած երեսիս, կարծես ուզեց ճանաչել ինձ և ապա համոզւած ասաց «երազ ես և դու, մարդ, և ամբողջ աշխարհը քեզ ճանաչող Աստուծով»:

— Ի՞նչ, ինչե՞ր ես խօսում, գուցէ դու զառանցում ես արդէն:

Նա ցնցւեց:

— Այո, երազ է—խօսում էր նա անվստահ, ինքն իրան, երազ ենք և մենք, երազ է և ինքն աշխարհը և բոլոր մարդիկ... և ինքն Աստ... . . .

Ես այլ ևս ոչինչ չիմացայ և խոր ու անուշ քնի մէջ ընկայ:

— Լուսացել էր արդէն:

— Քահանան դանդաղ քայլերով կըկին մօ-

տեցաւ զանգագատանը և քաշեց եկեղեցու փոքրիկ զանգերը... դողանջեցին նրանք: Եկան հետզհետէ աղօթաւորները ու սկսւեց պադարագը, տիրացուները սկսեցին իրանց սովորական ժամերգութիւնը, բայց այս անգամ կարծես աւելի ոգենորւած: Հաւատացեալներց իւրաքանչիւրը իր սուրբ պարտականութիւնն էր համարում գոնէ մի զոյգ մոմ վառել ու այդ վառուղ ու հալւող մոմերի ու անուշաբոյը կնդրուկի վեր բարձրացող քուլաների հետ սուրբ Գէւորգին էին ուղղում նրանք իրանց սրտի գաղտնիքն ու մեղքերը ու նրա թողութեանն ակնկալում:

— Ժամերգութիւնը վերջացաւ ու նրանք խառն ի խուռն դուրս եկան եկեղեցու բակը ու կմնգ առան: Նրանք բոլորն էլ քահանային էին սպասում և հենց որ դուրս եկաւ թէ չէ սկսեցին ամեն կողմից կանչել:

— Տէր հայր արի մեր հացը օրէնի:

— Տէր հայր եկ այստեղ:

— Տէր հայր համեցէք մեզ մօտ կարգիտ մատաղ:

Նա չէր իմանում ինչ անէր, որին մօտենար, որ միւսը չնեղանայ:

Բայց գանգնելու ժամանակ չէր նրանց քէ էր հարկաւոր: Տէրհօրը մօտեցան զիւղական առողջ ու մաքուր զաւակները և ձեռքերի վրայ բարձրացրած տարան սուփրան օրէնելու: Աշուղներն

ակսեցիս իրանց երգերը նւագել իսկ միւս կողմից էլ զանազան խմբերի դափի ու զուռնայի ձայնը բարձրացաւ և ոգուրութիւնը իր գագաթնագէտին հասաւ: Երբեմն ջահիների խմբերը, որոնց երակների մէջ եռում էր արիւնը, սակայն որոնք հնարաւորութիւն չէին ունեցել երաժշտութիւն ձեռք բերելու, զալիս խնդրում էին մէկին կամ միւսին, որ գոնէ մի ժամով կամ մի քանի քոպէով, աշուղներին կամ դափ ու զուռնան իրանց տան, որ իրանը էլ անմաս չմնան օրուայ ուրախութիւնից: Իսկ սեղանաւորները փոխանակ դափ ու զուռնան զիջելու, վեր էին կենում, խնդրում, իսկ շատ անգամ էլ զոռով իրենց հետ նստեցնում զրանց և այսպէս քէֆը շարունակում:

— Դէ՞ս ածէք վարպետներ, ի՞նչ էք լոել, գերեզմանատան հօ չէք, տաշ, տուշ, տաշ տուշ, ուռայ... զոռում էին զլուխները տաքացրած ուխտաւորները և զուռնայի տեսակ-տեսակ եղանակների հետ զանազան պարեր սկսում:

Տխուր էր միայն մէկը և չէր խօսում, չէր ժպտում և իր մտքերի մէջ ընկղմուած, իր սիօրն էր ողբում: Դա մեր նկարագրած կոյր աշուղն էր, որ առանց հրաւերի էր մնացել: Նրա ընկերը, որ միննոյն ժամանակ նրա առաջնորդն էր, էր բոլոր հնարքները գործադրում էր, բայց ի զուր: Երբ նրանց մօտով մարդ էր անց կենում, նա իսկոյն հրելով յայտնում էր նրան,

նա «սագն» առնելով ձեռքը երգում էր կրկին միւսնոյն բայց շատ ազդեցիք երգը. մեր հայրենիք թշւառ անսէր և այլն:

Այսպէս վերջացաւ հանգէսը և մենք գոնսարով, ուրախ զուարթ երգեր երգելով վերադարձանք գիւղ. սակայն իմ յիշողութեանս մէջ այսօր էլ դեռ թարմ է որբացած ու անճար մնացած աշուղի խօսքերը՝

«Մեր հայրենիք թշւառ անսէր,
Մեր թշնամուց ոտնակոխն,...

• • • • • • • • • • • • •
Իսկապէս որ ոտնակոխ:

աղքած ով եւսոց զգութ խոհման ամրակ ու
աղքած ով պայծ զիշտառու առաջ պահածել
էնու և զիշտառու առաջ զիշտ
էնու գրեւ և զիշտառու ապահով աշխարհ
ողքի խոհման զգութ նկատը պահու խոհ
ու ամառեալութի և մարդու բայր վամեցու
պահու և ծաղկաց և կուտ առ և զուտ
զգութ պահու նարու
առան ու և զիշտառու զիշտ
առան պահու զիշտառու զիշտ



23700

8560

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ

Լոյս են տեսել եւ վաճառում են

- 1) Ներկարար Միլզոն 5 կ.
2) Յոյժէ եկեղեցին ու բեխէր աշուղը . 10 կ.

ՎԻՃԱԿԱՆ
ՀԱՆՑՈՒԹԱ
ԽՈՒՋԵՆԵՐԻ
Ակադեմիա
СССР

ԳԻՆՆ Է 10 ԿՈԴ.

891.99
Բ-24